N 2 TM/FED պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է չորս եռաձող
պտտակադոնակի մատակարարում և տեղադրում՝ 4416000 դրամի չափով, առանց ավելաց-
ված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-
րություն, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախա-
րարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական
եկամուտների կոմիտե:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Վ Ո Ր Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ

10/23.13

0010, Երևան, Մելիք-Աղամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

11.07.2011թ. № 3/3.8-1/81431-11

Ձեր № _____

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պրն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 09.11.10թ. N 15/15.6/11387-10 գրության՝ կապված ՀՀ
կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011թ.
հունիսի 17-ի N Մ-468-Ա («Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական
անձանց միություն) որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի («Էլլիպս Ջի
Էյ» ՍՊԸ-ի հետ կնքված գործարք) հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների
շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Զանջոդայան

034/21368-11
12.07.2011թ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՈՒՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ 10/23.13


0015, Երևան, Մ.Խորենացու 3,
Հեռ. 50 20 20, 59 46 05

№ 1606/3-4/4852-11
12.07.2011թ.

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ա. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 09.07.2011թ. թիվ 15/15.6/11387-11 գրությանը կից ներկայացված
«Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 17-ի ՈՒ-468-Ա որոշմամբ
հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Հայաստանի ֆուտբոլի
ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն)» որոշման նախագծի
վերաբերյալ առաջարկություններ չկան:

 Ա. Աղաջանյան

Անուղղակի հարկերի բաժին, հեռ. 594652

044/21540-11
12.07.2011թ.

ՆԱԽԱԳԻՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
հուլիսի 2011 թվականի ՄՄ -
քաղ. Երևան

- Ա

10/23.14

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2009
ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 11-Ի ՄՄ- 855 -Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԵՎ ԿԻՑ
ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ ԵՎ ՆՈՒՅՆ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ
ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ
(«Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական
կազմակերպություն)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության
ֆինանսների նախարարության 2011 թվականի հուլիսի 14-ի N 3/3.8-1/81560-11, Հայաստանի
Հանրապետության քաղաքաշինության նախարարության 2011 թվականի հուլիսի 15-ի
N 01/13.2/3304-11, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության
նախարարության 2011 թվականի հուլիսի 15-ի N 03/07-1/7769-11, Հայաստանի
Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2011
թվականի հուլիսի 15-ի N ՖՔ/ԱՆՄ-4/6049-11, Հայաստանի Հանրապետության
կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի հուլիսի 15-ի
N ԱԱ/3-4/4957-11 և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի 2011
թվականի հուլիսի 14-ի N 01/3361-11 եզրակացությունները, **ո թ ո շ ու մ է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի 2009 թվականի դեկտեմբերի 11-ի «Հայկական
Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող
«Սոցիալ-մանկավարժական աջակցություն երեխաներին» ծրագրի մասին» N Մ-855-Ա
որոշման մեջ և կից ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

- 1) որոշման 1- ին կետում «321750000 դրամ» բառերը փոխարինել «342767700 դրամ»
բառերով.
- 2) կից ծրագրի 6-րդ կետում «321.750.000 ՀՀ դրամ (585 000 Եվրո)» բառերը
փոխարինել «342 767 700 ՀՀ դրամ (623 214 Եվրո)» բառերով.
- 3) կից ծրագրի 9-րդ կետում «(70 երեխա Գյումրիում և 30 երեխա Տաշիրում):»
բառերից հետո լրացնել «Իրականացվելու են Գյումրու և Տաշիրի կենտրոնների

10/23.14

վերանորոգումների միջոցառումներ:» բառերով, իսկ «321.750.000 ՀՀ դրամ, որից 269.599.550 ծրագրին վերաբերող ծախսերն են» փոխարինել «342 767 700 ՀՀ դրամ, որից 290 617 250 ծրագրին վերաբերող ծախսերն են»:

4) կից ծրագրի 10-րդ կետում «269.599.550դրամ» բառերը փոխարինել «290 617 250 դրամ» բառերով և կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ՝

«16. Գյումրու և Տաշիրի սոցիալական կենտրոնների վերանորոգում 15 751 530 ՀՀ դրամ (շինարարական աշխատանքները իրականացնելու համար մրցութային կարգով ընտրվել է «Արխտեխ-Շին» ՍՊԸ-ն) և պատուհանների տեղադրում 5 266 170 ՀՀ դրամ:»:

2. Սահմանել, որ «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության (ՀՎՀՀ՝ 05514397) կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Արխտեխ-Շին» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05536243) 2011 թվականի հուլիսի 7-ին կնքված՝ թիվ 056/BMZ/10/07/1 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Գյումրու և Տաշիրի սոցիալական կենտրոնների վերանորոգում՝ 15 751 530 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարան:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Ն Ա Տ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Կ Ո Ր Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ

10/23.14

0010, Երևան, Մելիք-Աղամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

14.07.14թ. № 3/3.8-1/81660-11

Ձեր № _____

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պրն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 12.07.11թ. N 15/15.4/11655-11 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009թ. դեկտեմբերի 11-ի N Մ-855-Ա («Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպություն) որոշմամբ հաստատված ծրագրում փոփոխություն կատարելու և նույն ծրագրին հարակից գործարքի («Արխտեխ-Շին» ՍՊԸ-ի հետ կնքված գործարք) հետ, հայտնում եմք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Զանցուղազյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ

10/13.14

37510, ք. Երևան, Հանրապետության հրապարակ
Կառավարական տուն 3
Հեռ.՝ 589080 Ֆաքս՝ 523200
www.mud.am
E-mail: info@mud.am

15.07.11թ. N 01/13.2/3304-11

Ձեր N _____ առ _____

«Հ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման
հանձնաժողովի նախագահ
պարոն Ս.Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Քննարկելով Ձեր 2011 թվականի հուլիսի 12-ի N 15/15.4/11655-11 գրությամբ ներկայացված «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի դեկտեմբերի 11-ի N Մ-855-Ա որոշման մեջ և կից ծրագրում փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին և նույն որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպություն)» ծրագրի մասին» ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագիծը, հայտնում եմ, որ նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Հարգանքով

Վ. Վարդանյան

15.07.11թ.

N 027/21932-11

Ե. Աթայան
52-46-80

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ
И НАУКИ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА

REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF EDUCATION
AND SCIENCE

DEPUTY MINISTER

10/13.14

0010, Երևան, Գլխավոր պողոտա, կառավարական տուն 3, Հեռ./Տեղ ֆաե
0010, Ереван, Главный проспект, Дом правительства 3, 0010, Main Avenue, Government House 3, Yerevan, E-mail: miens@edu.am, www.edu.am

N 03/07-1/7769-11 15 հուլիս 2011

«Հ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
նախագահ պարոն Ս.Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր սույն թվականի հուլիսի 12-ի N 15/15.4/11655-11 գրության՝ հայտնում եմ, որ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի դեկտեմբերի 11-ի Մ-855-Ա որոշման մեջ և կից ծրագրում փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին և նույն որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության)» որոշման նախագծի վերաբերյալ ՀՀ կրթության և գիտության նախարարությունը դիտողություններ և առաջարկություններ չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Ս.ՍԿՐՏՅԱՆ

Կար. Ն. Սահակյան
հեռ. 524777

15.07.11թ.

N 031/21948-11



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

10/23.14

« 15 » հուլիս 2011 թ.

№ Ք/ՆՆՎ-4/6049-11

Ձեռ 12.07.2011թ, 15/15.4/11655-11

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Քննարկելով «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «2009 թվականի դեկտեմբերի 11-ի թիվ Մ-855-Ա» որոշման մեջ և կից ծրագրում փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին և նույն որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին /«Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպություն/» ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագիծը՝ տեղեկացնում եմ, որ նախարարությունը վերոհիշյալ նախագծի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չունի:

Հարգանքներով՝

Ֆ. Բերիկյան

15. 07. 11թ.

№ 040/21956-11

Կատարող՝ Միջազգային կապերի
բաժին իւր. 563791

0010, ք. Երևան, Կառավարական տուն 3 իւր (374 10) 56 53 65, ֆաքս. (374 10) 54 31 60 <http://www.mss.am>



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԵՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ 10/23.14

0015, Երևան, Մ.Խորենացու 3,
Հեռ. 50 20 20, 59 46 05

15. 07. 11թ.

№ ՇՀՆ/Յ-4/4957-11

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեռ 12.07.2011թ. թիվ 15/15.4/11655-11 գրությանը կից ներկայացված «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի դեկտեմբերի 11-ի ՄՄ-855-Ա որոշման մեջ և կից ծրագրում փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին և նույն որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության)» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Ա. Աղալերոյան

Անտղրակի հարկերի բաժին, իւր.594652

15. 07. 11թ.

№ 044/21938-11



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ 10/23.14

<< 14 >> հայիս 2011թ.
N: 01/3361-11

ք.Գյումրի, Գ.Նոյնի 16
հեռ. (0312) 3-26-10, ֆաքս (0312) 3-50-77

«ՀԱՆՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ՇՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ»

Ձեր՝ 12.07.2011թ.
թիվ՝ 15/15.4/11655-11

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

«Հ Շիրակի մարզպետարանում քննարկվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի դեկտեմբերի 11-ի Մ-855-Ա որոշման մեջ և կից ծրագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին և նույն որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին» որոշման նախագիծը:

Չենք առարկում ծրագիրը որակել բարեգործական:

Հարգանքով՝

Ա.ԳԻԶԻՐՅԱՆ

Հ.Արշակյան
/0312/3-16-26

14.07.11թ.

№ 116/21875-11



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՇՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 դեկտեմբերի 2009 թվականի N Մ - 855-Ա
քաղ. երևան

«ՀԱՅՎԱԿԱՆ ԿԱՐԻՏԱՍ» ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ԿՈՂՄԻՑ ԻՐԱՎԱՆԱՑՎՈՂ «ՍՈՑԻԱԼ-ՄԱՆԿԱԿԱՐԾԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՒԱՆԵՐԻՆ» ՇՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2009 թվականի հոկտեմբերի 21-ի N3/3.8-1/2880-09, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2009 թվականի հոկտեմբերի 28-ի N Ե-5672, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2009 թվականի հոկտեմբերի 20-ի N 21-02-07/555, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2009 թվականի հոկտեմբերի 21-ի N62009-9853, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2009 թվականի հոկտեմբերի 26-ի N 27191/3-4 ու Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2009 թվականի հոկտեմբերի 26-ի N 1-01/3508 եզրակացությունները, որոշում է:

1. Բարեգործական որակել «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության (ԳՅ, քաղ. Գյումրի, Սարգսյան փող., 3-րդ նրբ., տուն 8, ԳՎԳՅ՝ 05514397) կողմից իրականացվող՝ 321750000 դրամ ընդհանուր արժեքով «Սոցիալ-մանկավարժական աջակցություն երեխաներին» ծրագիրը (կցվում է):

2. Սպիմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության կողմից կնքված՝ ստորև նշված գործարքն անմիջականորեն կապված է նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝


«Ապրենք և կառուցենք» ՍՊԸ -ի հետ (ԳՅ, քաղ. Գյումրի, Շիրակացու 51/2, ԳՎԳՅ՝ 05535637) 2009 թվականի սեպտեմբերի 3-ին կնքված N 050/SPAC/09/06/01 պայմանագրում (2009 թվականի սեպտեմբերի 23-ին կնքված պայմանագրի փոփոխություն) նշված գործարքը, որով նախատեսվում է Գյումրու սոցիալական կենտրոնի տարածքի և ջրամատակարարման ցանցի վերանորոգում՝ 4862310 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Առաջարկել «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպությանը՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման համընժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն՝ ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար:

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման համընժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպումը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Հայաստանի Հանրապետության Երևանի մարզպետին և Գյումրու քաղաքապետին:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

10/23.14


Հ Ա Ս Ս Ս Ս Վ Ա Ս Ի



«Հայկական Կարիտաս» բարեփոքական հասարակական կազմակերպության գործադիր տնօրեն Անահիտ Մխչյանի կողմից
«04» նոյեմբերի 2009թ.
«Հայկական Կարիտաս»

10/23.14

1. Ծրագրի նպատակը	Սուանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալ-մանկավարժական աջակցության ապահովում:
2. Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Նախատեսվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից:
3. Բարեգործը	Ծրագիրը ֆինանսավորվում է Պերմանական Կարիտասի և Պերմանական Կառավարության միջոցներով: Հասցե՝ Պերմանական Կարիտաս, Ֆրայբուրգ, 79104
4. Ծրագրի կատարողը	Հայկական Կարիտաս Բարեփոքական Հասարակական Կազմակերպություն Հասցե՝ ք. Գյումրի, Հ. Սարգսյան փ. 3-րդ կրթամաս, տուն 8 ՀՀ ՀՀ 05514397
5. Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Երևանի Մարզ, Գյումրի, Մ.Նորնմացի, նրբ. 1, տուն 3 «Հայկական Կարիտաս» սոցիալ-կրթական կենտրոնի Կարիտասի Սոցիալական կենտրոնների մասնաշենքերը Հայ Կաթոլիկ եկեղեցու կազմակերպության կողմից սոցիալական աջակցություն են, որոնք ծրագրի ավարտից հետո ևս ծառայելու են որպես սոցիալական կենտրոններ:
6. Ծրագրի բյուջեն	Ծրագրի բյուջեն կազմում է 321.750.000 ՀՀ դրամ (585 000 եվրո):
7. Բարեգործությունն ստացողը	Հայկական Կարիտասի Սոցիալական կենտրոններ հաճախող Գյումրիում 70 (2009թ. նոյեմբերից մինչև) 2010թ. հունվարից 70 երեխա) և Տաշիրում 30 (2011թ. հունվարից) սոցիալական աջակցվող երեխաներ
8. Ծրագրի իրականացման տևողությունը	Սկիզբ՝ 01.11.09 Ավարտող՝ 31.12.12




18/8

<p>9. Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը</p>	<p>Ծրագրի հիմնական նպատակն է առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին սոցիալ-մանկավարժական աջակցություն ապահովելն է:</p> <p>Ծրագրի շրջանակներում բացվելու է երկու սոցիալական կենտրոններ Գյումրի ու Տաշիր քաղաքներում, ուր հաճախելու են ընդհանուր առմամբ 100 երեխա (70 երեխա Գյումրիում և 30 երեխա Տաշիրում): Գյումրիում կենտրոնը կգործի 2009 – 2012 թթ., իսկ Տաշիրում 2011-2012 թթ.:</p> <p>Սոցիալական կենտրոններում սոցիալապես անապահով եւ դժվարին պայմաններում հայտնված երեխաների հետ աշխատելու են արհեստավարժ մասնագետներ՝ հոգեբաններ, սոցիալական աշխատողներ, իրավաբաններ, տարբեր մասնագիտությամբ ուսուցիչներ, ուլթեր կնպատեն նրանց ընդհանուր գաղափարներ, ընտանիքների հետ փոխհարաբերությունների կարգավորմանը եւ կրթությանը:</p> <p>Միջոցառումներ կան ուղղված երեխաների եւ նրանց ծնողների արհեստագործական ուսուցմանը (համակարգչային գործ, կար, վարսավիրություն, եւ.ն.):</p> <p>Կենտրոնը կգործի շաբաթը հինգ օր: Երեխաները հնարավորություն կունենան օրը մեկ անգամ սնվելու եւ իրենց հիգիենիկ փճակը բարելավելու կենտրոնում:</p> <p>Ծրագրի ընդհանուր արժեքն է 321.750.000 ՀՀ դրամ, որից 269.599.550 ծրագրին վերաբերվող ծախսերն են, իսկ մնացած 52.150.450 ՀՀ դրամը կազմակերպական ծախսեր:</p>
<p>10. Չեղք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը</p>	<p>1. Կենտրոնների վերանորոգում – 9405000 ՀՀ դրամ</p> <p>1.1. Գյումրիի սոցիալական կենտրոնի տարածքի եւ ջրանատակարարման համակարգի վերանորոգման աշխատանքների իրականացում 03.09.09 – 20.11.09 «Ապրիլ» և «Կառուցման» ՍՊԸ կողմից: - 4.862.310 ՀՀ դրամ արժեքով և 1.980.000 ՀՀ դրամ: Գյումրիի կենտրոնի ընթացիկ վերանորոգումներ 2010 – 2012 թթ.: - 1.980.000 ՀՀ դրամ: 1.3. Տաշիրի կենտրոնի վերանորոգում 2011 թ. – 2012 թթ.: - 1.925.000 ՀՀ դրամ: 1.4. Նյութերի գնում և վերահսկողի վարձատրություն՝ 637.690 ՀՀ դրամ: Երկու կենտրոնների վերանորոգման աշխատանքների արժեքը կազմում է 9.405.000 ՀՀ դրամ</p> <p>2. Կահույքի և սարքավորումների գնում – 14.575.000 ՀՀ դրամ:</p>

<p>11. Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը</p>	<p>3. Սոցիալական կենտրոնին սպառարկող մեքենայի գնում NIVA Chevrolet: - 7.150.000 ՀՀ դրամ: Ծրագրի ավարտից հետո մեքենան լիառաջի կազմակերպության նմանատիպ բարեգործական ծրագրերի համար/</p> <p>4. Սնունդի գնում շահառուների համար – 19.988.650 ՀՀ դրամ:</p> <p>5. Գրենական պիտույքների գնում շահառուների համար – 6.050.000 ՀՀ դրամ:</p> <p>6. Ուսուցողական նյութեր և սարքավորումներ – 16.500.000 ՀՀ դրամ:</p> <p>7. Տեսաձևերի պատրաստում և հետաքրծակում – 1.760.000 ՀՀ դրամ:</p> <p>8. Խոհանոցային պարագաների գնում – 852.500 ՀՀ դրամ:</p> <p>9. Սոցիալական կենտրոնների կոնոնալ ծախսեր – 9.075.000 Եվրո ՀՀ դրամ:</p> <p>10. Մեքենայի շահագործման և բենզինի ծախս – 12.534.500 ՀՀ դրամ:</p> <p>11. Ղեկորայք և հիգիենիկ պարագաների գնում - 2.211.000 ՀՀ դրամ:</p> <p>12. Տեղեկատվական թերթիկների տպագրում - 330.000 ՀՀ դրամ:</p> <p>13. Հագուստի գնում շահառուներին բաշխելու համար – 14.655.850 ՀՀ դրամ:</p> <p>14. Սպորտային զույգի գնում կենտրոնների համար – 1.729.750 ՀՀ դրամ:</p> <p>15. Երեխաների հետ աշխատող մասնագետների, փորձագետների, ուսուցիչների վարձատրություն – 152.782.300 ՀՀ դրամ:</p> <p>Ընդամենը՝ 269.599.550 դրամ:</p>
<p>12. Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ</p>	<p>Կազմակերպական ծախսերը կազմում են 52.150.450 ՀՀ դրամ:</p> <p>ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման համեմատողով Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն</p> <p>Կրթության եւ գիտության նախարարություն</p> <p>Շիրակի Մարզպետարան</p> <p>Գյումրու քաղաքապետարան</p> <p>Տաշիրի քաղաքապետարան</p> <p>Հայ Կաթոլիկե Առաջնորդարան</p> <p>Տաշիրի Տիրամայր Հայաստանի Կուսատան</p>
<p>13. Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը</p>	<p>Ծրագրի իրականացման վերահսկումը կրկնու է պարբերական բնույթ և կատարվելու է Չերձնաակա կարիտասի կազմակերպության եւ «Հայկական Կարիտաս»-ի վարչական խորհրդի կողմից:</p> <p>Վերահսկումը կատարվելու է այցելի, զեկուցագրերի, եւ վերստուգիչ միջոցառումների միջոցով:</p>

18/8

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի
հաշվետվություններ սերվայագրելու միջոցով:



18/8

ԼԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

— հուլիսի 2010 թվականի N Մ-
քաղ. երևան

-Ա

10/24.1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ
ԱՊՐԻԼԻ 19-Ի N Մ-231-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԵՎ ԿԻՑ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈ-
ԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(«ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի հուլիսի -ի N 3/3.8-1/11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի հուլիսի -ի N ԱԱ/3-4/11 եզրակացությունները, որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի ապրիլի 19-ի «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Սուրբ Հակոբ եկեղեցու հիմնանորոգում» ծրագրի մասին» N Մ-231-Ա որոշման մեջ և կից ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

- 1) որոշման 1-ին կետում «43.7 մլն դրամ» բառերը փոխարինել «47.4 մլն դրամ» բառերով.
- 2) որոշմանը կից ծրագրի 6-րդ կետում «43.7 մլն դրամ» բառերը փոխարինել «47.4 մլն դրամ» բառերով.
- 3) որոշմանը կից ծրագրի 9-րդ կետում «ձեռք բերում - 28.0 մլն դրամ» բառերը փոխարինել «ձեռք բերում - 28.0 և ներմուծում -3.7 մլն դրամ» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Ն Ա Ն Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Կ ՈՐ Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ

10/24.1

0010, Երևան, Մելիք-Աղամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

14.07.2011թ. № 3/3.8-1/81570-11

Ձեր № _____

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պրն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 13.07.11թ. N 15/15.6/11749-11 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011թ. ապրիլի 19-ի N Մ-231-Ա («ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամ) որոշմամբ հաստատված ծրագրում փոփոխություն կատարելու («ԱՌԴԱ կոնստրակշն, թրեյդ ընդ թեքնոլոջի») ՍՊԸ-ի հետ կնքված պայմանագիր) հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Զանջուղազյան

034/21818-11
14.07.2011թ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Ն Ա Գ Ա Հ Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ 10/24.1

0015, Երևան, Մ. Խորենացու 3,
Հեռ. 50 20 20, 59 46 05

№ ՊՊԱ/3-4/4956-11
15.07.2011թ.

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ա. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 13.07.2011թ. թիվ 15/15.6/11749-11 գրությանը կից ներկայացված «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի ապրիլի 19-ի ՄՄ-231-Ա որոշման մեջ և կից ծրագրում փոփոխություններ կատարելու մասին («ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Ա. Ալավերդյան

044/21937-11
15.07.2011թ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 ապրիլի 2011 թվականի N Մ-231-Ա
(Որոշումն ընդունվել է 2011 թվականի ապրիլի 1-ին)
քաղ. երևան

«ԱՌՂԱ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑ-
ՎՈՂ «ՍՈՒՐԲ ՀԱԿՈՒԲ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՈՒՄ» ԾՐԱԳՐԻ
Մ Ա Ս Ի Ն

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-
թյան 2011 թվականի մարտի 25-ի N 3/3.8-12952/11, Հայաստանի Հանրապետության արդարա-
դատության նախարարության 2011 թվականի մարտի 25-ի N 01/1718-11 և Հայաստանի
Հանրապետության կառավարության առկա պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի
մարտի 28-ի N ԱԱ/3-41740/11 եզրակացությունները, ինչպես նաև հաշվի առնելով Հայաստանի
Հանրապետության մշակույթի նախարարի 2011 թվականի ապրիլի 14-ի N 01/3.1/1482-11, Հայ
առաքելական եկեղեցու Արագածուրի թեմի առաջնորդի 2011 թվականի ապրիլի 7-ի N 42 և «ԱՌՂԱ»
բարեգործական հիմնադրամի 2011 թվականի ապրիլի 14-ի N 4-14/04 գրությունները, որոշում է.

1. Բարեգործական որակելի «ԱՌՂԱ» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ.
երևան, Պարոպր Սևակի 9, ՀՎՀՀ՝ 00057312) իրականացվող՝ 43.7 մլն դրամ ընդհանուր
արժողությամբ «Սուրբ Հակոբ եկեղեցու հիմնանորոգում» ծրագիրը (կցվում է):


2. «ԱՌՂԱ» բարեգործական հիմնադրամին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում
մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի
պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործա-
կան ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի
հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար:

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով
Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ծրագրում նշված


ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությունը
մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից
հետո մեկամսյա մեթոդներով՝ ամիսի տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարար-
ություն և Հայաստանի Հանրապետության կառավարության առկա պետական
եկամուտների կոմիտե:



Ա. ՏԵՐԱՍՅԱՆ

10/24.1



Վրաց 4/4
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«ԱՌ-Դ-Ա» բարեգործական հիմնադրամի կողմից
2011 թվականի մարտի 11-ին
Գործադիր տնօրեն Ստեփանյան

ՆԱԽԱԳԻՏ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
հուլիսի 2011 թվականի N Մ - - Ա 10/24.2
քաղ. Երևան

«Մուրք Հակոբ եկեղեցու հիմնադրում»
ծ ր ա գ ի ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011
ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 17-Ի N Մ-488-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԵՎ ԿԻՑ
ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(«Հայաստանի ամերիկյան համալսարան» հիմնադրամ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի հուլիսի 11-ի N 3/3.8-2/81422-11, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2011 թվականի հուլիսի 12-ի N 03/07-1/7666-11 և 2011 թվականի հուլիսի 18-ի N 03/07-1/7851-11 ու Հայաստանի Հանրապետության կառավարության անընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի հուլիսի 11-ի N ԱԱ/3-6/4823-11 եզրակացությունները, ինչպես նաև հաշվի առնելով «Հայաստանի ամերիկյան համալսարան» հիմնադրամի 2011 թվականի հուլիսի 7-ի գրությունը, որ ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 17-ի N Մ-488-Ա որոշման մեջ և կից ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները.
1) որոշման 1-ին կետում «699.5 կգ ընդհանուր քաշով, 8719.21 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ» բառերը փոխարինել «610.6 կգ ընդհանուր քաշով, 8547.21 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ» բառերով.
2) կից ծրագրի 6-րդ կետում «8,719.21 ԱՄՆ դոլարին» բառերը փոխարինել «8547.21 ԱՄՆ-ի դոլարին» բառերով.
2) որոշմանը կից ցանկը կարդալ հետևյալ նոր խմբագրությամբ (ցանկը կցվում է):
2. Սույն որոշման ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարության անընթեր պետական եկամուտների կոմիտե:

1. Ծրագրի նպատակը	ՀՀ Արագածոտնի մարզի Վարդենիս համայնքի «Մուրք Հակոբ» եկեղեցու հիմնադրում:
2. Ծրագրի բարեգործական որակման նպատակները	Հարկային արտոնությունների տրամադրում: Բարեգործին խրախուսում:
3. Բարեգործը	Արթուր Ջանիբեկյան, Օթարի Հակոբյան (ՀՀ, քաղ. Երևան, Գյուլբենկյան 1, բն 23)
4. Ծրագիրը կատարողը	«ԱՌ-Դ-Ա» բարեգործական հիմնադրամ (քաղ. Երևան, Պարույր Սևակի փող. 9, ՀՎՀՀ՝ 00057312):
5. Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	ՀՀ Արագածոտնի մարզ, գյուղ Վարդենիս: Բնագավառը՝ հողեր (եկեղեցաշինություն):
6. Ծրագրի բյուջեն	43,7 մլն դրամ:
7. Բարեգործություն ստացողը	Հայ առաքելական եկեղեցի:
8. Ծրագրի իրականացման տևողությունը	2011 թվականի մայիսի 1-ից մինչև 2012 թվականի մայիսի 1-ը:
9. Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, ամերիա ժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Պատերի, սյուների խաբիսխների և եեծամների ամրանավորում և բետոնացում - 10,2 մլն դրամ, զանգակատուն - 5,7 մլն դրամ, տանիք - 15,1 մլն դրամ, հատակ և ներքին հարդարում - 6,0 մլն դրամ, արտաքին հարդարում - 6,7 մլն դրամ:
10. Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների և ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը	Շինարարական նյութերի ձեռք բերում - 28,0 մլն դրամ, շինարարական աշխատանքներ - 15,7 մլն դրամ՝ առանց ԱԱՀ-ի:
11. Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը	Ծրագրի համար լրացուցիչ կազմակերպչական ծախսեր նախատեսված չեն, ծրագիրն իրականացվում է հիմնադրամի ընդհանուր կազմակերպչական ծախսերի հաշվին:
12. Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների հետ	Հայաստանի Հանրապետության Արևիկյան նախարարություն, Հայ առաքելական եկեղեցու Արագածոտնի թեմ:
13. Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացվող հաշվետվությունների և բարեգործի պայմանագրի աջակցությունների միջոցով:



10/24.2

Քանակ	Ապրանքների անվանում	Արժեք \$	Համախառն քաշ (կգ)
15 տեղ	ծալվող սեղաններ	\$ 999.85	610.6 կգ
1 տեղ	լայնաֆորմատ տպիչ սարք	\$ 4,176.04	
4 տեղ	լայնաֆորմատ տպիչ սարքի պարագաներ	\$ 469.16	
3 տեղ	զրքեր և ամսագրեր	\$ 1,000.00	
14 տեղ	թանաքի քարտրիջներ	\$ 726.16	
	ճանապարհածախս	\$ 1176.00	
37 տեղ	Ընդհանուր արժեքը	\$ 8,547.21	610.6 կգ

Տրանսպորտի տեսակը - բեռնատար ավտոմեքենա



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Կ Ո Ր Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ

10/24.2

0010, Երևան, Մելիք-Աղամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

11.07.11թ. № 3/3.8-2/81922-11

Ձեր № _____

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահի՝
պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 09.07.2011թ. N15/15.4/11478-11 գրությամբ ներկայացված Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 հունիսի 17-ի NU-488-Ա որոշման մեջ և կից ծրագրում փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Զանցուղազյան

11.07.11թ.

№ 034/21340-11

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ
И НАУКИ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА

REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF EDUCATION
AND SCIENCE

DEPUTY MINISTER

10/24.2

ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

10/24.2
մասին» որոշման նախագծի վերաբերյալ ՀՀ կրթության և գիտության նախարարությունը
դիտողություններ չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Վ. ՄԿՐՏՅԱՆ

0010, Երևան, Գլխավոր պողոտա, կառավարական տուն 3, Հեռ./Լեռ 8 03 02, ֆաքս/ֆաքս 8 03 02, ֆաքս/ֆաքս
0010, Ереван, Главный проспект, Дом правительства 3, 0010, Main Avenue, Government House 3, Yerevan, E-mail: miens@edu.am, www.edu.am

N 03/07-1/7851-11 «18 հոկտ» 2011

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
նախագահ պարոն Ս.Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի լրումն ՀՀ ԿԳՆ սույն թվականի հուլիսի 12-ի № 03/07-1/7666-11 գրության՝
հայտնում ենք, որ համաձայն Հայաստանի ամերիկյան համալսարանի «Հակոբյան»
բնապահպանական կենտրոնի տնօրենի բանավոր պարզաբանման՝ «Բնապահպանական
մոնիթորինգի համակարգի ձևավորումը ՀՀ հատուկ պահպանվող տարածքների
աշխատակազմի և հարակից բնակավայրերի դպրոցականների բնապահպանական
իրազեկումը բարձրացնելու միջոցով» ծրագրի «Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների
ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը»
հատվածին կից ներկայացված ցանկի «Գրքեր և ամսագրեր» տողով նշված են՝ ծրագրի
շրջանակներում ուսանողների և դպրոցականների համար բնապահպանական թեմայով
դասընթացներ կազմակերպելու համար «Բնապահպանություն» խորագրով դասագրքեր և
համապատասխան հոդվածներով ամսագրեր:

Հիմք ընդունելով վերոհիշյալը, հայտնում ենք՝ ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011
հունիսի 17-ի Մ-488-Ա որոշման մեջ և կից ծրագրում փոփոխություններ կատարելու

Կար. Ն. Սահակյան
հեռ. 524777



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ 10/24.2

ք. Երևան-0015, Մ. Խորենացի 3, 7

11.07.11թ.

№ ՆԿՆ/3-6/4823-11

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման
հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ձեր ս/թ. հուլիսի 9-ի համար 15/15.4/11478-11 գրությամբ կարծիքի ներկայացված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 հունիսի 17-ի Մ-488-Ա որոշման մեջ և կից ծրագրում փոփոխություններ կատարելու մասին մասին» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չունենք:

Ա. ԱՂԱՎԵՐԴՅԱՆ

կարարող՝ Լ. Հակոբյան
միջազգային հարաբերությունների բաժին
հեռ. 59 43 49

11.07.11թ.

№ 044/21333-11



AMERICAN UNIVERSITY OF ARMENIA
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՐԻԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

07 հուլիսի, 2011թ.

10/24.2

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի
նախագահ՝ պրն. Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պրն. Տեր-Սիմոնյան

Սույնով Ձեզ ենք դիմում հետևյալ խնդրանքով:

Ինչպես գիտեք, Հայաստանի ամերիկյան համալսարանի "Հակոբյան" բնապահպանական կենտրոնի բեռի վերաբերյալ հանձնաժողովը որոշում ընդունեց որոշ ապրանքներ ներկայացված ցուցակից հանելու և նոր ցուցակ ներկայացնելու մասին:

Ցավոք, մեր կողմից ներկայացված վերանայված ցուցակում հանվել էին չհաստատված ապրանքի անվանումը և գինը, սակայն բեռի համախառն քաշը և ճանապարհածախսը մնացել էին նույնը: Մեր կողմից թույլ տված այս վրիպումը խնդիր է հարուցել մաքսագերծման ռեժիմը փոխելու գործընթացում:



Ուստի, խնդրում ենք Ձեր ներողամտությունը և աջակցությունը Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 17.06.2011թ-ի Մ-488-Ա որոշման մեջ ներքոնշյալ ճշտումները մտցնելու առումով:

բեռի քաշը 699.5 կգ -ի փոխարեն պետք է լինի 610.6 կգ, ճանապարհածախսը 1348 դոլարի փոխարեն՝ 1176 դոլար, և հետևաբար, բեռի ընդհանուր արժեքը (ներառյալ փոխադրման ծախսերը) 8719.21 դոլարի փոխարեն 8547.21 դոլար, իսկ տեղերի քանակը 46-ի փոխարեն՝ 37:

Կից ներկայացնում ենք ապրանքների անվանացանկը ճշտված տեղերի քանակով, արժեքով և քաշով:

Կանխահայտ շնորհակալությամբ

ՀԱՅ վարչական կենտրոն



40 Marshal Baghramian Avenue
Yerevan, 0019, Armenia
Tel.: (374) 01 512526, 512525
Fax: (374) 01 512512

300 Lakeside Drive
5th Floor
Oakland, CA 94612
Tel.: (510) 987-9452
Fax: (510) 208-3576



10/24.2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
17 հունիսի 2011 թվականի N Ա-488-Ա
քաղ. երևան

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՐԻԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍՑԵՈՎ
ԱՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի հունիսի 2-ի N 3/3.8-2/79724-11, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2011 թվականի մայիսի 23-ի N 03/07-1/5208-11, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի մայիսի 19-ի N ԱԱ/3-6/3233-11 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է,**


1. Բարեգործական որակելի ամերիկահայ բարերար Սարգիս Հակոբյանի նվիրատվության միջոցներով գնված, Միացյալ հայկական հիմնադրամի կողմից ուղարկված «Հայաստանի ամերիկյան համալսարան» հիմնադրամի հասցեով ԱՄՆ-ից ստացված բեռի (699.5 կգ ընդհանուր քաշով, 8719.21 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժեքով՝ ներառյալ փոխարժման ծախսերը, ծրագիրը և ցանկը կցվում են, «Արարտայան» Տ/Մ ներմուծման ծրագիրը:

Բեռն օգտագործվելու է Հայաստանի ամերիկյան համալսարանի «Հակոբյան» բնապահպանական կենտրոնի կողմից շրջակա միջավայրի հետազոտության, պահպանության, ինչպես նաև բնապահպանական կրթության ոլորտում գործունեություն իրականացնելու, գիտահետազոտական/կրթական արշավներ կազմակերպելու համար:


2. «Հայաստանի ամերիկյան համալսարան» հիմնադրամին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱԸ



Ա. ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆ



Բնապահպանական մոնիթորինգի համակարգի ձևավորումը ՀՀ հատուկ պահպանվող տարածքների աշխատակազմի և հարակից բնակավայրերի դպրոցականների բնապահպանական իրազեկումը բարձրացնելու միջոցով

Ծ Ր Ա Պ Ի Ի

1.	Երազնի նպատակը	1. Հանրապետական մակարդակով աջակցել կենսաբազմազանության մոնիթորինգի ամբողջական համակարգի ստեղծմանը: 2. Ներդրել էրկրթական ծրագրերի ամբողջական փուլ, որի արդյունքում բնապահպանական ուղղվածության կազմակերպությունները կհամարվեն արժանյան չափանիշներին համապատասխանող մասնագետներով: 3. Ներդրել առևտավորման մի շարք ծրագրեր, որոնք բնապահպանական գերատեսչությունների և այլ էկոլոգիական կազմակերպությունների աշխատակիցների համար կստեղծեն որակավորման բարձրագույն հնարավորություն:
2.	Երազնի բարեգործական որակման նպատակը	Ծրագրի շրջանակներում օգտվել հարկային և մաքսային արտոնություններից՝ օրենքով սահմանված կարգով:
3.	Գարնգործը	Ամերիկահայ բարերար՝ Ջեֆֆ Հակոբյանը և ընտանիքը:
4.	Երազնի կատարումը	Հայաստանի Ամերիկյան Համալսարանի (ՀԱՀ) Հակոբյան բնապահպանական կենտրոնը (ՀԲԿ):

10/24.2

5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Ծրագիրը իրականացվում է բնապահպանական բնագավառում, ընդգրկելով գրեթե ամբողջ ՀՀ տարածքը:
6.	Ծրագրի բյուջեն	8,719,21 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ:
7.	Բարեգործություն ստացողը	Հայաստանի Ամերիկյան Համալսարանը (ՀԱՀ):
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	Սկիզբը՝ 2011 Յունվարի 15-ը, ավարտը՝ 2011 Դեկտեմբերի 31-ը:
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	<p>1. ՀՀ հատուկ պահպանվող տարածքներում, ինչպես նաև շրջանների դպրոցների համար բնապահպանական դարևորացների կազմակերպում: Այդ նպատակով անհրաժեշտ է ձեռքբերել ծավիղ, դյուրին կերպով տեղափոխվող սեղաններ, որոնք կարող են օգտագործվել նաև ՀԱՀ-ում կազմակերպվող դասերի ժամանակ: Ժամկետը՝ 2011թ. Մարտի 1-ից մինչև Դեկտեմբերի 31-ը:</p> <p>2. ՀՀ կենսաբազմազանության վերաբերյալ քաղաքացրական աշխատանքների տեսողական պատկերում, ինչի համար մեզ անհրաժեշտ է 40 չափսի գրեթե անհրաժեշտ: Այն թույլ կտա նաև պատշաճ մակարդակով ներկայացնել արդյունքները միջազգային կոնֆերանսներին:</p> <p>Նշված միջոցառումները կազմում են մեր կողմից իրականացվող ծրագրի կարևոր մաս, և այսպիսով, ձեռք բերվող սարքավորումները զգալիորեն կնպաստեն ծրագրերի իրականացմանը: Ժամկետը՝ 2011թ. Օգոստոսի 1-ից մինչև Դեկտեմբերի 31-ը:</p>
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) սարքավորումների ու ծառայու-թյունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Ցանկը, ներառյալ քանակը և արժեքը կցվում է:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպչական ծախսեր չկան:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	ՀՀ կառավարական բարեօրոժական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, ՀՀ կրթության և գիտության նախարարությունը, ՀՀ բնապահպանության նախարարությունը, ՀՀ մարզերում հաստիկ պահպանվող տարածքները արմինխարտագիս:

10/24.2

13.	Ծրագրի արդյունավետության մեկամասնի վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	<p>ՀՀ-ն իր հետադարձական և կրթական աշխատանքների համար հաշվետու է ՀԱՀ-ի իր կազմակերպությանը, որին ներկայացվում է տարեկան հաշվետվություն:</p> <p>Բնոյն ձևակերպման և բաշխման ավարտից հետո ներկայացվելու է հաշվետվություն ՀԱՀ-ի վարչական տնօրենին:</p> <p>Պետք է նշել, որ ՀՀ-ն իր հետադարձությունների արդյունքները անվճար տրամադրում է ինչպես պետական մարմիններին, այնպես էլ հասարակական կազմակերպություններին:</p> <p>Մասնավորապես, ՀՀ-ն ստեղծել է անվճար աշխարհագրական տեղեկատվական համակարգի (USZ) քարտեզագրական տվյալների բազա, որը համապատասխան ինտերնետային կայքի միջոցով հասանելի է բոլոր շահագրգիռ կազմակերպությունների համար: ՀՀ-ն իր զգալի ներդրումն է ունեցել ՀՀ Կենդանիների Կարմիր Գրքի (2010թ) ստեղծման գործում և անվճար տեղեկատվության աղբյուր է թե՛ պետական, թե՛ հասարակական կազմակերպությունների համար:</p>
-----	---	--

Ծրագրերի կազմող/իրականացվող

 Կազմակերպության

10/24.2

10/24.2

Քանակ	Ապրանքների անվանում	Արժեք \$	Համախառն քաշ (կգ)
15 տեղ	ծալվող սեղաններ	\$ 999.85	699.5 կգ
1 տեղ	լայնաֆորմատ տպիչ սարք	\$ 4,176.04	
4 տեղ	լայնաֆորմատ տպիչ սարքի պարագաներ	\$ 469.16	
3 տեղ	գրքեր և ամսագրեր	\$ 1,000.00	
14 տեղ	թանաքի քարտրիջներ	\$ 726.16	
	ճանապարհաճախ	\$ 1348.00	
46 տեղ	Ընդհանուր արժեքը	\$ 8,719.21	699.5 կգ

Տրանսպորտի տեսակը - բեռնատար ավտոմեքենա